

# ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

## ՊՐԱԽՈՍԼԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Սինոդի արած որոշումները (15—21 դեկտ. 1907 թ.)  
խղի՛ի ազատութեան մասին:

Ս. Սինոդը իւր որդոցը «խաւարի իւխանութիւնից» պահպանելու համար կոչուած լինելով՝ պահանջում է, որ պրաւասլաւ եկեղեցու նկատմամբ մինչև այսօր գոյութիւն ունեցող առաւելութիւնները անփոփոխ մնան և յետագայում, որ իւր դաւանած վարդապետութիւնը ազատօրէն տարածելու իրաւունքը մի՛միայն պրաւասլաւ եկեղեցին ունենայ, իսկ օտար դաւանութիւններին թոյլատրուի իրենց գիրկը ընդունելու մի՛միայն համոզմունքներով դարձածներին. քրիստոնէական կրօնի և սորա պաշտօնեաների գիրքը և պատիւը յարձակմունքներից, վիրաւորանքներից և նշաւահներից զերծ պահելու համար, յարմար է համարում այդ բոլոր գործողութիւնները պատժող պարզ և որոշ կանոններ ունենալ օրէնսդրական զբքերում: Որոշում է նոյնպէս, կարգալոյծ եղած սրբազնագործ պաշտօնեաները ոչ միայն իրաւունք չունենան քաղաքացիական պաշտօններ կատարելու այն նահանգում, ուր նոքա առաջ ծառայում էին իբրև քահանայ, այլ և այնտեղ ապրելու:

Бакинское Өхо.

Խղճի ազատութեան մասին Ս. Սինոդի արած որոշումները ռուս. մամուլը յուղել են: Այդ որոշումների հիմք ծառայող ո՛չ քրիստոնէական սկզբունքները առանց կուսակցութեան խտրութեան լրագիրները համարում են «հեղ և խոնարհ» Քրիստոսի վարդապետութեան հակառակ:

Վյադ. Նարեհով, «РѢЧЬ» լրագրի № 8-ի մէջ յիշում է Պրեբդոնոսցելի նշանաւոր նամակը՝ ուղղուած 1888 թ. զուհիցերական աւետարանական ընկերութեան նախագահ Նաւիլին, որով Պրեբդոնոսցելը ապացուցանում էր, որ Եւրոպայի ոչ մի պետութեան մէջ այլադաւանները չեն վայելում այնպիսի ազատութիւն՝ ինչպէս Ռուսաստանում: Եթէ, գրում էր նա, Եւրոպայում այս բանը չեն ուղղում խոստովանել, դա այն պատճառով է, որ այնտեղ օրէնքով սահմանուած խղճի ազատութիւնը

միացած է քարոզելու—տարածելու բացարձակ իրաւունքի հետ: Սակայն Ռուսաստանը ուրիշ վարդապետութիւն քարոզելու այգալիսի իրաւունք չի կարող տանելի համարել, որովհետեւ պատմութիւնը նրան կտակել է սրբազան պարտականութիւն—ուղղափառ եկեղեցին պահպանել այն բոլորից՝ ինչ որ սորան վտանգում է և այս պարտականութիւնը եղել է ռուսական ազգային գոյութեան էական պայման: Ռուսաստանը, յայտարարել է Պորեգոնոսցեւը, երբէք չի թոյլ տայ, որ իւր ուղղափառ զաւակներին այլազաւանները իրենց շարքերի մէջ դասեն: Եւ Պորեգոնոսցեւի այս հայեացքները արձագանք գտնելով օրէնսդրական մարմինների մէջ ևս՝ այլազաւանների կամ խղճի ազատութեան հարցը մնաց բաց մինչև 1905 թ. ապրիլի 17, երբ կրօնական անհամբերատարութիւնը ըստ երևութին դադարեց գործելուց ու յայտարարուեց խղճի կատարեալ ազատութեան սկզբունքը: Այս ժամանակ է ասել Պետերբուրգի միարոպոլիտ Անտօնին իւր պատմական նշանաւոր խօսքերը՝ «ուղղափառ հաւատք անում է—գօրանում է շնորհիւ Տեառն վարդապետելով, հեզութեամբ եւ բարի օրինակներով, ուստի եւ ամեն մի բռնութիւն հակառակ է Քրիստոսի եկեղեցու բնաւորութեան». ապա սրբազան Անտօնին ասելով, որ հաւատքի հակառակ գործողների վարմունքները պատժող օրէնքները չեն համապատասխանում ուղղափառ եկեղեցու հիմք ծառայող խաղաղութեան եւ քրիստոնեական սիրուն, միջնորդում էր: որ 1006-րդ յօդ. փոխուել, որի համաձայն հոգևորականութիւնը պարտականութիւն ունէր աշխարհային իշխանութիւնից պահանջելու, որ ուղղափառութիւնից հեռացողները դատաստանակտն քննութեան ենթարկուին:

Եւ նաքօկսովը, ասելով, որ մետրոպոլիտի խօսքերը երազ էին, որ Պորեգոնոսցեւի հոգին կենդանի է. նորա միտքը շարունակում է իւր կործանիչ աշխատանքը, վերջացնում է իւր խօսքը այս ձևով. «Սակայն սոքա հեզութեան խրատներ, վարդապետութիւն եւ բարի օրինակներ համարուող միջոցներ չեն, որոնց մասին խօսում էր մետրոպոլիտ Անտօնին: Այժմ այդ միջոցները պէտք է առաջուայ նման որոնել նախադուշացնող, յանցանքները (հաւատափոխութեան համար) պատժող կանոնադրութեան մէջ—այն էլ քրէական օրէնսդրութեան: Եւ Ս. Սինոդը 1907 թուականի վերջին վերստին բռնեց այն ճանապարհը, որը այնքան վիշտ է պատճառել և այն էլ միայն Անտօնի, միարոպոլիտին չէ: Ինչպէս տեսնում ենք խղճի ազատութիւնը «այժմ հաւատարիմ ձեռքերումն է գտնւում»:

Պրոֆ. Վ. Գ. Գրիգորյան

«Новое Время»ն Սինոդի որոշումները «ողնու կաշուց պատրաստած ձեռնոցների է նմանեցնում»։ գործը նոր չէ, բայց ենթադրում էր, որ այդ ձեռնոցները հաղնում է միայն տէրութիւնը և ոչ թէ տէրութեան հազցնում էր եկեղեցին, որի գլուխը Յիսուս Քրիստոս է և որը առաջնորդում է Ս. Հոգով: Չի կարելի չիշել Մարթային ուղղած Քրիստոսի խօսքերը. «Մարթա, Մարթա, դու հոգաս և զբազում իւր զբաղեալ ես. բայց աստ սակաւ ինչ պիտոյ է, Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ո՛չ բարձցի ի նմանէ»:

Իսկ «Нашъ Вѣкъ»ը ասում է. «Հասարակութիւնը արդէն վաղուց է, որ սպասում է եկեղեցական համագումար ժողովին, վաղուց սպասում է որ պրակտիքաւ եկեղեցու ամբողջ կազմը միանգամայն կբարեփոխուի. իսկ դորա փոխարէն բերրոկրատ հոգևոր իշխանութիւնը իւր veto-ն է դնում նոյն իսկ քաղաքացիական ազատութեան ամենատարրական սկզբունքի՝ խղճի ազատութեան վերայ:

### ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հիւսիսային արևմտեան Եւրոպայի Օսնաբրիք քաղաքում անցեալ տարուայ սեպ. 23—25 տեղի է ունեցել ընդ. աւետարանական բողոքական ընկերութեան արեւելյան ժողովը: Պրոֆ. Գրիւսէնդորֆ խօսել է այն մասին, թէ ի՞նչ ձևով պէտք է աւետարանը մատչելի դարձնել վայրենի ժողովուրդներին: Դք. Ֆիստէր խօսելով ճապոնական զանազան կրօնների մասին՝ աշխատել է ապացուցանել, որ դրանք չեն դիմանայ ժամանակակից քաղաքակրթութեան պահանջներին. որից յետոյ ժողովի նախագահ դր. Քենդ ղեկուցել է, թէ քրիստոնէութիւնը ճապոնիայում լաւ արմատ է բռնում և որ պիտի աշխատել աւելի լաւ տարածման համար: Ամենից վերջ խօսել է Դէօթինկէնի՝ իւր ազատամտութեամբ աչքի ընկնող՝ պրոֆ. Բուուսէտ «Միսիոնի և կրօնների պատմութեան մասին»:

«Դուսաւ Աղօլֆ» ընկերութեան արեւելյան ժողովը ենայում 1907 սեպտ. 16—17:

Այս ընկերութիւնը, որի նպատակն է ամեն տեղ բողոքական համայնքներին օգնել, եկեղեցիներ, դպրոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ հիմնել, ծագել է 75 տարի